



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳՈՒՅԱԿ ՄԵԳՐԵԼԻ

Ա Ն Մ Ե Ղ  
Հ Ա Զ

(ՊԱՏԿԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՄԱՔԻՑ)

Վանցելելից բարգ. Պ. Խ.

Պ.

Թիվ 1, 1904

Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Միք. Փողոց № 81.  
(26)

899.9621

Մ-42

899.962.1

J - 422

ար

ԳՈՒՏՈՒՄ ՄԵԳՐԵԼԻ

# ԱՆՄԵՂ ԶՈՀ

(ՊՈՏԿԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔԻՑ)

ՅՈՒԹ

Արագերեկից բարզմ. Պ. Ա.

Պ.

— \* —

Թիֆլիս, 1904  
Տպարան „ՀԵՐՄԵՆԻՎ“ Միբայելիան փողոց № 81.  
(26)

26.06.2013

74.882

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅ Ք Ա Մ Ա Յ Ա

Дозволено цензурою Тифлисъ 11-го июня 1904 года.

Վ. Բ. Լուսով բարեկամություն

## Ա Կ Մ Ե Ղ Զ Ա Հ

I

Արևին արգէն մայր էր մտել: Ցերեկը ու գեշերը շուտով պիտի միմեանց հանդիպէին, բայց և կրկին շուտով բաժանուէին ու մութը պէտք է պատէր երկիրը: Սակայն Կոծիս Զաւարիշվիլին դեռ ևս չէր թողել իր աշխատանքը: Նա ամբողջ ոյժով խփում էր բահը հողին և ուղում էր մի անգամից փորել, վերջացնել իր մի հատիկ արտը: Այնտեղ էր նաև Կոծիայի պառաւ մայրը, որ տաշարի համար կտրտած յարդը մի տեղ էր հաւաքում:

Կոծիան մի չքաւոր ազնուական էր, նա ընդդամենը մի քանի օրավար հող ունէր: Հողը ինքն էր մշակում, բայց էլի ապրուստի համար չէր բաւականացնում: Կոծիան մի փոքրիկ այգի էլ ունէր: Այս այգին բաւականին լաւ օգուտ էր տալիս, ամեն տարի նա երկու երեք բեռ գինի էր ծախում և այս փողով սիմինդր ու հագուստեղէն էր առնում: Ինքը բաւականանում էր շամանով<sup>\*)</sup>, որի վերջացնելուց յետոյ ջուրն էլ լաւ անուշ ա-

<sup>\*)</sup> ձաճից քամուած հասարակ դինի: Խ. թ.

նում, չնայած որ նրանց գիւղը Վերին-Խմերեաթում հռչակուած էր գինու լաւ բերքով: Իսկ երբ Կոծիան փողի պակասութիւն էր ունենում, այն ժամանակ ստիպուած դնում էր կամ քարէ ածուխի հանքերում և կամ երկաթուղու ճանապարհների վրայ աշխատելու: Նա իր օրում ուրիշի դրսանը չէր ծառայել: «Եսքարութիւնը մարդուն փշացնում է», ասում էր նա, երբ նրան խորհուրդ էին տալիս որ և է մէկի մօտ ձառայ մտնել:

Դեռ ևս Կոծիան փորելը չէր վերջացրել, երբ ինչ որ ճայթոցի ձայն լսուեց: Ակներե էր, որ մի տեղ ցանկապատ էր կոտրում: Զայնը լսելուն պէս՝ Կոծիան բահը ձեռքից գցեց, վեր առաւ ծառիտակընկած կացինը, և գէպի այն կողմը վազեց:

— Չսպանես Կոծիա, կանչեց որդու յետեից վրդովուած մայրը և ինքն էլ սկսեց նրան հետեւել: Երկումն էլ մայր ու որդի հասկացան, որ հարևանի եղն էր մտել իրանց այգին: Այդ եղը շատ անգամ էր փչացրել Կոծիայի աշխատանքը, հէնց այդ պատճառով էլ Կոծիան կացինն հետը վերցրեց: Նա շատ անգամ էր աղաչել, պաղատել եղան տիրոջը, որ հեռացնէր եղը, բայց նա բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում:

— Կապիր, Զուրաբ քո անպիտան եղը՝ թէ չէ, Աստուած է վկայ, կը սպանեմ, ասաց վերջին անգամ Կոծիան:

— Ապա համարձակուիր և այն ժամանակ կը տեսնես քո հալը, պատասխանեց Զուրաբը:

Զուրաբ Զաւարիշւիլին գիւղի ամենահարուստ և ամենաազգեցիկ մարգն էր: Նա Կոծիայի նման «գեագաներից» չէր վախենում: Նա շատ Կոծիայի նմաններին անիծել էր տուել իրանց ծնուած օրը. իսկ Կոծիայի գէմ աւելի ոխ ևս ունէր: Մի կողմից Զուրաբի բակին սահմանակից էր Կոծիայի այգին. Զուրաբը ցանկանում էր, որ իր շուրջը սեփական հողերով շրջապատուած լինէր. այդ պատճառով ուզում էր նրա այգին էլ ձեռք գցել: Բայց Կոծիան ոչ մի կերպ չէր զիջում իր արիւնքրտինքով մեծացրած այգին, ոչ ծախել և ոչ էլ որ և է տեղի հետ փոխել: Սրա վրայ Զուրաբը զայրացել էր և Կոծիայի հետ թշնամացել և միշտ առիթ էր փնտուում որեիցէ փորձանքի մէջ ձգել նրան:

Կոծիայի մայրը այս լաւ էր հասկանում և շատ էր վախենում Զուրաբից: Հէնց այս պատճառով նա Կոծիային զգուշացնում էր, որ չսպանելը եղը: Խեղճը համոզուած էր, որ եղան սպանելը Զուրաբը էժան չէր նստացնի իրանց վրայ և վախից գողում էր: Իսկ Կոծիան ոչինչ չը յիշեց, երբ իր փոքրիկ այգում տեսաւ նրա եղը: Այն անիծուածը կարծես թէ դիտմամբ Կոծիային բարկացնելու համար հանգիստ ման էր գալիս նեղ շատիղներով և ստի տակ էր տալիս նորաբողբոջ վազերը: Այս տեսնելուն պէս՝ Կոծիայի սիրաը սկսեց տրոփալ, գէմքը սարսափելի կնճռոտեց, աչքերը վառուեցան և կացինը ձեռքին հետեւեց

Եղան սպանելու: Կոծիան հասաւ հէնց մառանի մօտ կանգնած խեղճ եղանը և այնպիսի թափով խփեց կացինը, որ դժբախտ անասունը միայն մի անգամ կարողացաւ բոռալ և վայր ընկաւ: Հէնց այդ միջոցին հեալով վրայ հասաւ կոծիայի մայշը, սակայն երբ տեսաւ, որ եզր գետնի վրայ թրպրտում էր, այլևս ոչինչ չառաց և արտասուալից աչքերով հեռու կանգնեց: Շուարած կոծիան եղանն էր նայում և կարծես թէ հրճում էր նրա մահով:

Քիչ ժամանակից յետոյ՝ եզր վերջին անգամ շարժուեց ու անչնչացաւ: Կարծես թէ կոծիան էլ դրան էր սպասում, շուռ եկաւ և կրկին ուզում էր արտը գնալ: Այդ միջոցին նրան մօտեցաւ մայրը և գողգոջուն ձայնով ասաց:

—Ո՞ւր ես գնում որդի, սրան ինչ ես առնելու:

—Ի՞նչ պիտի անեմ, Զուրաբը թող գայ և տեսնի իր եզր, պատասխանեց կոծիան, տեսնենք թէ նրա եզր ինչպէս էլի կը գայ իմ այգին:

—Չէ, որդի, այս բանը ծածկել լաւ չի լինի, ասաց կրկին մայրը, -հէնց այս ըոպէիս գնա գիւղից ընտրած բարեխիղճ անձի մօտ և յայտնիր: Եթէ գալու լինի այս գիշեր հետդ բեր, եթէ չէ, գոնէ վաղը առաւօտեան թող կանուխ գայ, որ եղն էլ, նրա տուած վասան էլ գնահատէ: Իսկ ինչ որ պարտ կը մնանք անմիջապէս կը վճարենք Զուրաբին, թէ չէ եթէ գործը գանդա-

տի ընկնի, ով կարող է գործին հետեւել, դու մենակ մարդ ես..

Պոծիան ձայն-ծպտուն չէր հանում, նա նայում էր շներին, որոնք այդտեղ հաւաքուած եւզան արիւնն էին լակում, և ժպտում էր, կարծես թէ նա մի բանի վրայ ուրախանում էր:

—Չես լուս, այ որդի, -շարունակեց կրկին մայրը, գնա, ինձ լսիր, հօ գիտես, որ Զուրաբի համար Աստուած գոյութիւն չունի և մեզ ոչնչացնելու համար, նա ոչ մի ջանք չի խնայի:

Հետզհետէ, մութ վարագոյրը տարածւում էր երկրիս երեսին: Շուրջը խորին լուսթիւն էր տիրում: Բնութիւնը պատրաստում էր հանդստանալու, իսկ կոծիայի մօր սիրտը ուժգին բարախում էր: Նրա սրտի բաբախումը, թւում էր թէ լուս էին այնտեղ գտնուած ծառերը, որոնք կարծես թէ զայրացած շառաչում էին՝ «ով է որ մեր քունը խանդարում է»:

—Դէ որդի, շարդ տանի մայրդ, էլ մի ուշանայ, — էլի չէր հանգստանում կոծիայի մայրը:

—Լաւ, կը գնամ, բայց այս անտէրին ինչ անենք, իզուր շները կը վշացնեն, հաղիւ ձայնեց կոծիան:

—Այդ եզր մի կերպ այս մառանը քարշանք, ասաց մայրը:

—Բաս լաւ, կսնչեց կոծիան, և սկսեց քաշել եզր, մայրն էլ օգնութեան հասաւ: Երկուսով մեծ դժուարութեամբ մի կերպ ներս քաշեցին: Արդէն

բնկրովին մուժն էր։ Հունեակ չը կար, աստղեա-  
լըն էլ տեղ տեղ էին երևում, Յանկարծ երկինքը  
ամպեց, բնութիւնը մռայլուեց, կարծես թէ նա  
մի բանից նեղացած էր։

Կոծիան բարեխիղճ անձի մօտ գնաց, իսկ  
նրա մայրը արտք գարծաւ բահը վերցնելու։ Երբ  
եզմն սպանուած տեղով անցաւ, հողը փորեց և,  
առանց այն էլ շներից լիզած արիւնը բոլորովին  
չորացրեց։ Երևի խեղճը զգւում էր արիւն տես-  
նելուց։

## II

Քնթրելու ժամանակն էր. երբ Կոծիան եր-  
կրորդ գիւղը հասաւ բարեխիղճ մարդուն տես-  
նելու, բայց վերջինս տանը չէր։ Հենց այս է, եւ  
կանուտարան, ասացին. Կոծիային, գուցէ այս գիւ-  
շեր բոլորովին չը գայ։

Կոծիան ամբողջ օրը աշխատելուց, եղան  
գեպեց վրդովուած և այժմ էլ այդքան ճանաւ-  
պարհ կորելուց սաստիկ յօդնած՝ այնու ուրիշ տեղ  
չը կարողացաւ գնար, այլ ուղղակի տուն դարձաւ։  
Կոծիան շուարած չէր իմանում ինչ անէր։ Եղը  
սպանուած էր, սպացնել չէր կարելի, իսկ Երբ  
կիմանան թէ սպանուել է, —միթէ միւնոյն չէ,  
մտածում էր ինքն իրան։

Արդէն կէս գիշեր էր. երբ Կոծիան տուն  
հասաւ։ Մայրը անբաւական էր Կոծիայի մենակ

վերադառնալուց, բայց ինչ կարող էր անելք նա  
տեսնում էր, որ Կոծիան սաստիկ յօդնած էր։ Ա-  
ոչինչ չը կարողացաւ տաել. միայն քնթրիք պատ-  
րաստեց։ Բայց Կոծիան ոչինչ չէր հասկանում, նա  
փալասի նման անկողին մտաւ և նոյն բոպէին  
քնեց, իսկ թշուառ մայրը չը գիտէր, թէ ինչ ա-  
նէր, նա անշարժ կանգնած՝ քնած պարան էր  
նայում։ Ո՞վ գիտէ ինեղնը քանի ժամանակ այս-  
պէս շուարած կը մնար, եթէ նրա ոտները չը  
դողային և ինքն էլ ակամայ անկողնի վրայ շն-  
կնէր։ Խեղճը բոլորովին չէր կապողանում քնելք.  
բայց մի կերպ ոտների մօտ սովաց և երկու ձեռչ-  
քով շնչասպառ գրկեց Կոծիայի ծնկները։

Իիչ ժամանակից յետոյ՝ այս տնակում քաղցր  
քնի մէջ էին Կոծիան և նրա պառաւ կատուն իր  
երկու ձագ ուկներով։ Զէր քնած միայն Անծիայի  
մայրը։ Նրա աշքերից չէր հեռանում Զուրարի  
վայրագ գէմքը և անվերջ այն բանի մասին էր  
մտածում, թէ ինչով պիտի վերջանար այս եւ-  
զան գործը։ Եր կարծիքով Զուրարը ոչ թէ  
մարդ, այլ մի գաղան էր, որը ոչ մի քանչ չէր  
խնայի, միայն թէ կարողանար իր հակառակը-  
գից վրէժ լուծել եւ իւաւ, ինչ գաղան կարող է հա-  
շապարուել մարդ-գաղանին։ Մարդ-գաղանը մէ  
մեն տեսակ գաղանից աւելին ևս վտանգաւոր է,  
որովհետեւ գաղանութեան հետ միացած է նաև  
մարդկային խելքը։ Կոծիայի թշուառ մայրը Զու-  
րարի լացացրած ուրիշ շատ մայրեր էր տեսելք

Պարզ էր, որ ինքն էլ նրանից լաւ բան չէր կարող սպասել: Այսպէս էր մտածում խեղճը և լարուած մտածմունքով կարծես ականջ էր դնում: Նա նախազգում էր, որ Զուրաբը արշաւելու էր այս գիշերը:

Ահա և ինչ որ շշուկ լսուեց: Նա վախեցաւ և սկսեց շնչառապառ ականջ դնել: Շշուկը երկարացաւ և Կոծիայի մայրը հասկացաւ, որ մուկը ինչ որ բան էր կրծում մի անկիւնում: Կոծիայի մօր սիրող հանդարտուեց: Ո՞հ, նա ամեն ինչ կը տար, եթէ ինքն էլ մուկ ստեղծուած լինէր և ոչ մարդ: Միթէ իրաւ նախանձելի չէ նրա համար մկան դրութիւնը, որ հանգիստ կրծում էր կակալը: Նա այժմ ոչ մի բանից չէր վախենում, քանի որ համոզուած էր, որ իր միակ թշնամին՝ պառաւ կատուն բաղցր քնի մէջ էր:

Անցաւ էլի մի փոքր ժամանակ: Կոծիայի մայրը կրկին մտածմունքների մէջ էր, երբ նորից աղմուկ լսուեց: Այժմ խեղճին մահուան քրտինք պատեց և ամբողջ մարմնով մի սարսուռ անցաւ: Աղմուկի յետելց լսուեց շան հաջոցը, իսկ հաջոցին մի քանի մարդոց ձայն ու խօսակցութիւն: Ահա լսուեց և շան զարհուրելի ճչոցը: Կոծիայի մայրը հասկացաւ, որ իր հաւատարիմ Մուրային ծեծում էին նրա թշնամիները: Անծանօթները ահա արդէն դռան մօտ հասան ու կանդնեցին: Կոծիայի մայրը կաղամախի տերեկի նման դողում էր. նա վախենում էր նոյն իսկ շունչ քաշելուց:

Խեղճը, ականջները սրած՝ տեղից չէր շարժւում, կարծես թէ, նապաստակ էր և որսկանները հետքը գտել էին:

«Թիսկ-թիսկ» լսուեց դռան բաղխումը: «Թընդ-դընդ» ձայնեց Կոծիայի մօր սիրող դռան բաղխոցին: «Լաւ, վեր կաց, մինչն երբ պիտի թագնուեմ» ասում էր, կարծես, մէկը նրա սրտի մի անկիւնից: Կոծիայի մայրը վեր կացաւ, մօտեցաւ օջախին, կրակ վառելու: «Միայու», մլաւեց պառաւ կատուն զայրացած. «Ինչ կրակ վառելու ժամանակ է» կարծես ասում էր կատուն: Կատուիկները մօր ձայնը լսելով, ականջները բարձրացրած՝ մօր մօտ վազեցին, կարծելով թէ իրանց է կանչում: Պառաւ կատուն նրանց տեսնելուն պէս, սկսեց ըստ սովորութեան նրանց փաղաքշելք Կատուիկներն էլ այդ էին ուղում. վըրսայ ընկան և ծծերին կպան: Պառաւ կատուն վեր կացաւ մի անգամ ձգուեց, պոչը երկարացրեց և կրկին կատուիկների մօտ պառկեց: Յետոյ սկսեց լիզել, պոչով խաղալ նրանց հետ: Կոծիայի մայրը նայեց երջանիկ անասուններին և ախ բաշեց: «Երանի ձեզ, ինչ բախտաւոր էք...» Դժբախտ մարդիկ. Արգեօք կը գայ այն օրը, երբ գուք այլեւս անասուններին չէր նախանձի և չէր ափսոսայ, որ մարդ էք ստեղծուել:

—Կոծիա, էյ Կոծիա, չես լսում, —կանչեցին դրսից:

Այս ձայնը ընած Կոծիային զարթեցրեց,

իսկ նրա արթուն մօրը բոլորովին շամեցրեց։ Այս  
ձայնը գիւղի աւագներից մէկի ձայնն էր։  
—ժամանակ տուէք, դեռ իմ եղան միսը  
չե՞ն մարսել։—Այս ձայնը Զուրաբինն էր։ Այս  
խօսքերին հետևեց ուրախ քրքջոց։ Երեսում էր  
դռան մօտ հինգ վեց մարդ էին հաւաքուած։  
Նոյն միջոցին Կոծիայի մայրը կրակ վառեց։ Կո-  
ծիան էլ վեր կացաւ։

—Այ մարդ, ինչ եղար այսքան ժամանակ,  
դուռը բաց արած, լսուեց դրսից տանուտէրի ձայնը։  
Կոծիան մի անդամ ձլմկոտաց, խարխափելով մօտե-  
ցաւ դռանը, փակոցը քաշեց և դուռը բաց արաւ։

Ներս թափուեցին տանուտէրը, գրագիրը,  
գիւղի աւագները, բարեխիղճ մարդը, որին Կոծի-  
ան տանը չէր գտել նրանց հետ և ինքը Զու-  
րաբը։ Սրանց տեսնելով՝ Կոծիայի մայրը շփու-  
թուեց և հազիւ էր ոտքի վրայ մնում։ Իսկ Կոծիան  
անպէս էր շուարել, որ չէր կարողանում հաս-  
կանալ թէ ինչ էր կատարուում իր շուրջը։

## III

Նատ ժամանակ չէր, ինչ Զուրաբը Զաւարիշ-  
վիլին հարստութիւն և աղղեցութիւն էր ձեռք  
բերել։ Զուրաբը և Կոծիան աղղականներ էին և  
կարողութեան կողմից շատ չը պէտք է տարբե-  
րուէին միմեանցից, բայց Զուրաբը ոչ այնքան  
իր «կաւլով» և աշխատանքով, ինչպէս գիւղերում էլ

ասում էին, այլ աւելի անազնիւ միջոցներով, ու-  
րիշներին կեղեքելով՝ մեծ փող էր գիւղել։

Այսպէս-թէ այնպէս, Զուրաբը այժմ մեծ-  
կարողութեան տէր էր և օրէցօր աւելի հարստա-  
նում էր։ Նա փողը արնի գնով շահով էր տալիս-  
և ջնուղի տոկոս վերցնում։ Առաջին անգամ Զու-  
րաբը մտցրեց գիւղում տուգանք ասած բանը,  
իսկ այժմ ամենքը գիւղէին նրա համը։ Զուրաբը  
անուանի մարդ էր ոչ թէ միայն իրանց գիւղում,  
այլ և ամբողջ շրջակայ գիւղերում, որտեղ ամեն-  
քից յարգանք էր վայելում։ Եւ ինչպէս կարող էր  
չը յարգուել, քանի որ ամենքն էլ նրանից էին-  
փող վերցնում։ Ամբողջ գիւղական վարչութիւնը,  
տանուտէրը, գրագիրը և միւս ծառայողները Զու-  
րաբի հլու հպատակներն էին, որովհետև նրանք-  
ամենքն էլ նրա չնորհիւ էին այդ պաշտօններին-  
արժանացել։ Ամբողջ գիւղում նա էր մարդ յա-  
մարտում, ում որ Զուրաբը լաւ աչքով կը նա-  
յէր, այդ էր պատճառը, որ մեծ ու փոքր, ամեն-  
քըն էլ՝ աշխատում էին նրա սիրաը շահել։ Շա-  
տերը, գուցէ, Զուրաբին չէին սիրում, բայց հա-  
կառակ իրանց խղճի՝ ստիգուած էին յարգելնը-  
րան։ Զուրաբը մի իշխան էր գիւղում։ Նա ոչնչով՝  
պակաս չէր հին իշխաններից։ Միթէ, նրա բո-  
լոր պարտապանները նրա ստրուկները չէին։ Իզուր-  
չէին ասում։ թէ իշխաններից ստրուկները խլե-  
ցին։ իսկ Զուրաբին տուին։ Իրօք, եթէ հնում ի-  
շխաններն էին դատում իրանց ստրուկներին, այ-

ժըմ Զուրաբն էր գասում ամենքին։ Ամեն շաբաթ, երբ գիւղակն դատարանում գործեր էին քննում, Զուրաբն իր ջորու վրայ նստած՝ այն տեղ էր գնում։ Երբ հեռուից տանուտէրը, գրագիրը կամ գատաւորները նկատում էին Զուրաբին, ամենքն էլ վազում էին ընդ առաջ, որը ջորու սանձն էր բռնում, որ ասպանդակը քաշում և այսպիսի մեծարանքներով ջորուց ցած էին իշեցնում։ Յետոյ ներս էր մտնում գատարանը և որ կողմն ուղենար, այն կողմը կը թեքէր արդարութեան կշուր (նայած թէ, որ կողմն էր նրա անյատակ գրանել աւելի լցրել)։ Ոչ մի գործ չէր պատահի, որ Զուրաբը որևէ մասնակցութիւն չունենար, իբրև պաշտպան, կամ քննիչ։ Նատ անդամ նոյն իսկ իր գործերն էլ իր ներկայութեամբ էր քննուում։ Այն ժամանակ, վայ այն խեզերին։ Իզուր, թող ոչ ոք չը մտածէր թէ Զուրաբի մօտ կարող էր արդարութիւն ասած բանը գտնել... հէնց պատճառն էլ այդ էր, որ Կոծիայի մայրը Զուրաբից սասափիկ վախենում էր և նրա յիշողութիւնից չէին հեռանում Զուրաբից դժբախտացրած մայրերը։

Զուրաբը շատ ժամանակից իվեր առիթ էր որոնում, որ մի կերպ կարողանար Կոծիային ձեռք ձգել, և շատ ուրախացաւ երբ ծառաները յայտնեցին, թէ Կոծիան իրանց եզր սպանել էր նա իսկոյն ծառաներից մէկին ուղարկեց հետամուտ լինելու, թէ ինչ կանէին եղան, և երբ ամեն ինչ իմացաւ, ուրախացած բեխերը ոլորեց և ժպտաց։

«Լու, այժմ ես գիտեմ» մտածում էր նա, «Ես մարդ չեմ լինի, եթէ այն աղքատին բանուում չը գիտեցնեմ»։

Անմիջապէս մի ծառայ ձիով թռցրեց այն բարեխիզծ մարդու մօտ, որի մօտ Կոծիան էլ գնաց։ Նրանք ճանապարհին միմեանց չը հանգիպեցին, որովհետեւ Կոծիան արտերով գնաց, իսկ նա ձիով մեծ ճանապարհով պիտի գար։ Միւս ծառային տանուտէրի մօտ ուղարկեց գրադրին էլ կանչեց. երրորդին էլ գիւղի աւագների մօտ ուղարկեց և այսպիսով գործը յաջողեցրեց, իբր թէ Կոծիան եզր գողացել, մորթել է, միսը մօտակայ գիւղաքաղաքում ծախելու նպատակով։

Մինչև ընթրիքը Զուրաբից հրաւիրուած մարդիկ արդէն հաւաքուել էին։ Զուրաբը նրանց մանրամասն բացատրեց գործի էութիւնն և խընդրեց, որ նախ ընթրէին և ապա խուզարկէին Կոծիայի տունը։ Զուրաբը ընթրիքը գիտմամբ երկարացրեց, որովհետեւ ուղում էր, որ Կոծիան տանը լինէր։ Ծնթրիքին շատ հաւեր վայելեցին, շատ գինի անուշ արին և Զուրաբի պատուաւոր հիւրերը գինու զօրութեամբ աւելի և պատրաստուեցին նրան ծառայելու։ Ծնթրիքից յետոյ մեծ պատրաստութեամբ՝ բոլորը միասին Կոծիայի տունը արշաւեցին, նրանք կարծես թէ մի յայտնի աւազակ ձերբակալելու էին գնում։

Հասնելուն պէս ոչ ոքի բան չը հարցրին, սկսեցին տունը խուզարկել և երբ ճիշտ մա-

ուանում տեսան նոր սպանուած եղը, առանց հարց ու փորձի, անյապաղ սկսեցին արձանագրութիւն կազմել, ինչպէս որ Զուրաբն էր ցանկանում: Ոչ ոք չը հաւատաց, որ եղը այդումն էր սպանուած և ոչ մառանում դադունի:

Արձանագրութիւնը, ինչպէս որ հարկն էր տանուտէրից վաւերացուած «փակական ստորագրութեամբ և արքունական կնքով դրոշմած», դիւղի աւագների և բարեխիղճ մարդու վկայութեամբ, համարեաթէ նոյն դիշերը տեղական իշխանութեանը ներկայացրին: Ի հարկ է շուտափոյթ կարգադրութիւն եղաւ և ազնիւ Կոծիան ինչպէս գող բանտարկուեց գաւուական բանտում, իսկ գործը քննիչին յանձնուեց:

## IV

Անցան մի քանի ամիսներ, որոնք կարծես տարիներ, գարեր լինէին Կոծիայի և նրա մօր համար: Ճիշտ որ աներեակայելի էր Կոծիայի դրութիւնը այդ ժամանակամիջոցում: Կոծիան, երբ առաւոտները վեր էր կենում, միայն նրա մասին էր մտածում, որքան կարելի է շատ աշխատել այդ օրը: Նա գիտէր, որ իր ամբողջ ընտանիքը, սիրելի մայրը, թշնամի թէ բարեկամ, թէ ուրախութիւն, ամեն ինչ միայն նրա վղի վրայ էին, իսկ ինքը ուզում էր ամենքի առաջ պարզերես գուրս գալ, որ ամօթով չը մնար: Այս

էլ գիտէր Կոծիան, որ մայրը հետզհետէ ծերանում էր և շուտով անկարող կը լինէր, աշխատելու: Եւ այդ պատճառով հարկաւոր էր օգնական ճարել, ամուսնանալ, որ նրա հետ միասին գործէր: Բայց այն էլ գիտէր, որ ամուսնութիւնը շատ նոր պահանջներ է աւելացնում և դրա համար պէտք էր օրինաւոր պատրաստութիւն տեսնել: Քանի անդամ ասել է նրա մայրը. «Այտղայ ամուսնացիր, մի սպանիր այսպէս, առանցքո բախտաւորութիւնը տեսնելու»: — «Ո՛չ, մայրիկ, գեռ ինչ ամուսնանալու ժամանակ է, մենք էլ քաղցածութիւնից մեռնում ենք պատասխանում էր Կոծիան դեռ էլի շատ և շատ աշխատանք է հարկաւոր»: Եւ նա անդադար աշխատում էր, Կոծիայի համար աշխատանքը միս ու արիւն էր դարձել: Ինչպէս որ գրագէտ մարդու համար անհրաժեշտ էր գիրքը, որ կարդալով որեիցէ բան է սովորում կամ զբաղւում, այնպէս էլ Կոծիայի համար անհրաժեշտ էր աշխատանքը: Աշխատանքը աղնուացնում էր Կոծիայի միտքը և զբաղեցնում: Ամենքն էլ զարմանում էին Կոծիայի նման երիտասարդի այստեսակ աշխատասիրութեան վրայ և այն էլ աղնուական ծագում ունեցող երիտասարդի: «Երեկի մի հասարակ գիւղացու որդի է», ասում էր յաճախ Զուրաբը Կոծիայի համար, «թէ չէ այսքան աշխատանքը ինչպէս կարող է տանել»: — Այս, Կոծիան աղնուա-

կանին չի նմանում, — պատասխանում էին Զուրաբին իր ստորագրեալները: Եւ իսկապէս նրանք չէին սխալում: Կոծիան չէր նմանում այն անպէտք և ձրիակեր ազնուականներին, որ վերջերս աւելի բազմացան մեղանում: Կոծիան հասկացել էր, որ առանց աշխատանքի չէր կարելի ապրել այժմեան ժամանակներում և դիւզացու հետ միասին բահը ճեռքից չէր թողնում: Նա չէր նմանում նաև փողով հարստացած Զուրաբին: Մեծ զանազանութիւն՝ կար Զուրաբի և Կոծիայի մէջ, չը նայած, որ նրանք ցեղակիցներ էին: Կոծիան ազնիւ էր բառիս բուն նշանակութեամբ, բայց Զուրաբը միայն թղթի վրայ էր աղնիւ, իսկ երբեմն «գերազնիւ»: Կոծիան իսկապէս մարդ էր, մի աշխատաւոր մշակ, որին աշխատանքը կեանք էր ներշնչում:

Ահա այս տեսակ մարդը, մի քանի ամիս է՝ ինչ բանտումն է նստած, որտեղ ոչ թէ աշխատանք, այլ լոյսի երես անդամ չէր տեսնում: Արդեօք ինչով էր զբաղուած նա այս ժամանակամիջոցում. մտածում էր արդեօք, որեիցէ բանի մասին: Նա ոչ միայն մտածում, այլ և զարոյթից ճաքում էր. նա տանջում, չարչարում էր. նա ցաւում էր իր վրայ, ցաւում—մօր վրայ: Նա գիտէր թէ ինչ դժուար կացութեան մէջ կը լինէր մայրը: Մի կողմից վիշտը, միւս կողմից Զուրաբի մօտիկ լինելը, և այս բոլորը իր մօրը կը տանջէին: Կոծիան այն էլ իմացաւ, որ քննու-

թեամբ հաստատում էր իր յանցագործութիւնը և սա աւելի ևս տանջում, դառնացնում էին նըրա կեանքը: Ի՞նչպէս, այսքան ժամանակ անմեղ մարդը իզուր պիտի տանջուէր: Միթէ այս աշխարհում ճշմարտութիւնը միշտ այսպէս հալածուած պիտի լինի, իսկ փողն ու ոյժը թագաւոր է...

Եթէ այժմ Կոծիայի համագիւղացիներից մէկը նրան տեսնէր, դժուար թէ կարողանար նրան ճանաչել: Նա բոլորովին մաշուել, աչքերը փոսն էին ընկել, ձեռներն ու ոտները ծանրացել էին: Ո՞ւր էին նրա կարմիր խնձօրանման այտերը, վարդագոյն պսպղուն շրթունքները, կենդանի, բոցավառ աչքերը: Այս բոլորը չքացել էին, և Կոծիայի փոխարէն նրա ստուերն էր մընացել, որը քամին էլ կարող էր վայր ձգել, այնպէս ուժասպառ էր եղել: Ի՞նչ ոյժ պիտի մնար Կոծիայի մէջ, քանի որ նրան զրկել էին բոլոր իրաւունքներից: Ոչ մի բան չէր մնացել, որ նրան սիրոտ տար և քաջալերէր: Նա հաւատը կորցրել էր, իսկ յոյսը վաղուց արդէն հանգել էր նրա մէջ: Միայն միակ սէրը, մաքուր մայրական սէրն էր, որ Կոծիային կենդանութիւն էր տալիս: Եթէ այդսէրը չը լինէր Կոծիան ինքնասպանութիւն կը գործէր, կամ վշտից կը մեռնէր:

Կոծիան ամբողջ օրեր ընկած էր լինում մի տեղ. ոչ մէկին ձայն չէր տալիս և ոչ ոք էլ նըրան չէր նեղացնում, չնայած որ նրա հետ միա-

սին շատերն էին նստած բանտում։ Միայն արտասունքն էր սփոփում նրա վշտերը և զովացնում նրա ալրած ու խորուած սիրտը։ Նա միայն անհամբերութեամբ սպասում էր Զատկի նման կիրակի օրուան և բոլոր նրա մտքերը կիրակի օրուան շուրջն էին պտտում։

Միայն կիրակի օրով էր կենդանանում նաև Կոծիայի մայրը. նրանք իրար միայն կիրակի օրով էին կարողանում տեսնել, իրարու միմիթարել։ Ամեն կիրակի օր յայտնուում էր Կոծիայի մայրը դռան մօտ և սպասում էր, մինչև Կոծիայի տեսութեան կարժանանար։ Խեղճ մայր։ Նա աւելի վատ դրութեան մէջ էր, քան թէ որդին, չնայած որ ազատութիւնից զրկուած չէր։ Է՛հ, ի՞նչ նշանակութիւն ունի մօր համար ազատութիւնը, երբ նրա միակ որդին բանտումն էր և այն էլ առանց յանցանքի։

Երկուշաբթի առաւտից սկսած մինչև շաբաթ երեկոյ Կոծիայի մայրը դադար չունէր, քանի որ այժմ բոլոր հոգուը նրա վրայ էր ծանրացած։ Նա աշխատում էր անդադար՝ թէ ներսում, թէ դըրսում, ուղում էր ամբողջ տարուայ ապրուստը հայթայթել։ Ամբողջ գիւղում մի մարդ չը գտնուեց, որ նրան օգնութեան համնէր այս ժամանակին։ Աշնան վերջն էր, գործի ամենատաք ժամանակը։ Ի՞նչպէս կարող էին օգնել գիւղացիք, քանի որ ամենքը դողում էին Զուրաբից, քանի որ ամենքը կուտած էին Զուրաբից, քանի որ

Բայց բարեբախտաբար Կոծիայի մայրը յոյսը չէր կորցրել և այդ պատճառով նա դիմանում էր ամեն բանի։ Կոծիան խարում էր մօրը, իբր թէ շուտով ազատելու են իրան և մայրն էլ հաւատում էր. որ շուտով կը գար Կոծիան և նրանք նորից կսկսէին իրանց առաջուայ բազցր կեանքը վարել։ Չնայած, որ արդէն ամիսներ էին անցել, բայց Կոծիային չէին ազատում, իսկ Կոծիայի մայրը չէր յուսահատում։ Կարծես թէ տանջանաքները, գժբաղտութիւնները և արտասուքները նըրանաւելի ամրապնդել—երկաթինման կոփել էին։

## V

Կոծիայի գործի քննութիւնը վերջացաւ։ Միքանի անգամ հարցաքննեցին Կոծիային, մի բանի անգամ կանչեցին նաև Զուրաբին իր վկաներով։ Կոծիան լալով աղաչում էր, որ ինքը բոլորովին անմեղ էր, բայց ով կը լսէր։ Մի մարդ վկայ չունէր, որ իր ասածը կարողանար հաստատել։ Պարզ էր, որ նրա մօրը բոլորովին չէին հաւատաւոյ իսկ ուրիշ, ով կը համարձակուէր Զուրաբի գէմ խօսել։ Նրանք ևս ոչինչ շասացին, թէ եզզը այգումն էր սպանուած, որոնք մի քանի անգամ միջնորդել էին Զուրաբին այս եղան մասին։

Սրանից մի քանի օր առաջ քննիչը վերջին անգամ կանչեց Կոծիային և յայտնեց, որ նրա

գործը արդէն վերջացրել է, իսկ այժմ ուղարկուելու է Քութայիս դատախազին:

Այնուհետև Կոծիային տեղափոխեցին այն բաժանմունքը, որտեղ Քութայիս ուղարկելու չորս մարդ էլ կային, Կոծիային էլ նրանց հետ միասին պիտի ուղարկէին:

Կոծիայի ընկերները գոհ չէին, որ իրանց մի նոր ընկեր աւելացաւ, նրանք իւէթ աչքով էին նայում Կոծիային: Նրանք շարունակ իրար հետ գաղտնի փափառեմ էին և Կոծիայից խոյս էին տալիս: Պարզ էր, որ նրանք մի գաղտնիք ունեին և այս գաղտնիքը չէին ուզում, որ Կոծիան իւմանար: Կոծիան էլ նրանց չէր անհանդստացնում և մի անկիւնում ընկած՝ տեղից չէր շարժում:

Մի անգամ կէս գիշերին Կոծիան ինչոր ձայնի վրայ զարթնեց: Նա իսկոյն չը կարողացաւ ուրոշել թէ ինչ ձայն էր լսում: Երբ աչքը ընտելացրեց մթին միայն այն ժամանակ նկատեց, որ մի քանի հոգի բռնել էին մէկին, և նա առաստաղի տախտակներ էր սղոցում: Կոծիան հաօկացաւ ընկերների մտադրութիւնը և շունչը կը տրուեցաւ: Ընկերների փոխարէն նա էր վախենում: «Ի՞նչպէս են վատահանում վախչել», մտածում էր նա, «Հ՝ լմ, ինչպէս պիտի վախչեն պահապաններից, որոնցով լրջապատուած է բանտը: Ո՛չ, նրանք ոչ մի տեղ չեն կարող գնալ, նրանց նորից կը բռնեն, կամ կը սպանեն», այսպէս էր

մտածում Կոծիան և ուզում էր խորհուրդ տալ բանտարկեալներին, որ այդ մտադրութիւնից յետ կենային, երբ նրանցից մէկը կանչեց.

—Եղբայր արթնեն ես:

Կոծիան սարսափեց և հազիւ կարողացաւ արտասանել—այս:

—Մենք այս է գնում ևնք, շարունակեց նոյն բանտարկեալը, քեզ էլ կը տանէինք, բայց չես կարող և իզուր մեզ էլ կը խանգարես, երբ մեր մասին հարցնեն, ասա, որ ոչինչ չը գիտես, թէ ինչ ժամանակ դնացինք: Քեզանից մինչեւ անգամ շնորհակալ կը լինեն, որ առիթից չօգտուեցիր և դուցէ պատիժդ էլ թեթեացնեն:

—Բան է, եթէ գալ ուզենաս, մենք որ կը գնանք, քիչ ժամանակից յետոյ էլ գուարի, եթէ վատահ ես քեզ վրայ, ասաց Կոծիային երկրորդը:

—Ոչ դա չի կարող գալ, —ասաց էլի առաջնը, նա չի կարող շատ մանգալ և հէնց այստեղ կը բռնուի. չէ եղբայր, —դարձաւ Կոծիային:

—Ի՞նչպէս կարող եմ փախչել, հազիւ եմ շնչում, —պատասխանեց Կոծիան:

—Խելօք մարդ ես եղել... ասաց բանտարկեալներից մէկը և բոլորեքեան ծիծաղեցին:

—Վերջացրի, —դոչեց հէնց այդ ժամանակ առաստաղ սղոցողը և տախտակի մի մեծ կտոր յանձնեց ընկերներին: Յետոյ միմիանց հետ կապոտած շապիկներ, վարտիկներ և արխալուղներ

տուին նրան, որը թոկի տեղ պիտի փոխարինէր։  
Վերջը նրան վերև բարձրացրին։ Նա մի բանից  
բռնած տանիքը բարձրացաւ։ Իսկ յետոյ սիւնից  
կապեց իր «թոկը» և մի ծայրը ներքև թողեց։

—Դէ՞ն, վեր բարձրացէք, ամրութեան վրայ  
մի կասկածէք, կանչեց նա ընկերներին։ Ընկեր-  
ները մէկ մէկ տանիք բարձրացան։

—Միաս բարև եղբայրս, կանչեց նրանցից  
մէկը կոծիային։

—Աստուած յաջողութիւն տայ, —պատաս-  
խանեց կոծիան։

Փոքր ժամանակից յետոյ՝ կրկին ամեն ինչ  
խաղաղուեց։ Բանտարկեալները յաջողութեամբ  
լուսանցքին հասան, որտեղից անցնելով տան թեք  
ծածկոյթի վրայ բարցրացան, իսկ ծածկոյթից  
շատ հեշտ էր այնպիսի ճարպիկ գիւղացիներին  
անձրեսի համար շինած խողովակներով ցած սո-  
զալ և փախչել։

## VI

Կոծիան մնաց մենակ մտածմունքներով պա-  
շարուած, որոնք տանջում էին նրան։ «Ահա նրանք  
փախչում են», մտածում էր նա, սակայն շուրջը  
գերեզմանային լուսութիւն էր թագաւորում։ Կո-  
ծիան քիչ էր մնում, որ նախանձէր նրանց, որոնք  
երեկ իր հետ միասին նստած էին, իսկ այժմ ա-  
զատ են։ «Մարդկանցից կարելի է փախչել, բայց

միթէ Աստծուց էլ կարելի է փախչել։ Նրանից  
խօմ ոչ մի տեղ չեն կարող փախչել։ մտածում  
էր կոծիան։ «Գուցէ, նրանք էլ ինձ նման անմեղ  
էին... Երեք նրանց հարկաւոր էր մարդկանցից  
փախչել, և փախան... նրանք աղատեցին իրանց  
գլուխը... Երանի նրանց... Քիչ ժամանակ կոծի-  
շնչասպառ սկսեց ականջ գնել և կրկին շարունա-  
կեց—Աստուած իմ... Ես... Ես ինչ անեմ... Միթէ  
ինձ համար ոչ մի փրկութիւն չը կայ։ Միթէ ես  
բանտում պիտի փթեմ... Նա մի առ ժամանակ  
շուարած մնաց, կարծես թէ ինքն իրանից պա-  
տասխանի էր սպասում։ «Ո՛չ, ո՛չ վերջապէս կան-  
չեց ոտի ելնելով. «Պիտի դնամ, ես էլ պիտի գը-  
նամ», տսում էր նա. «Բայց ինչպէս», անցաւ իս-  
կոյն նրա մտքով մօտեցաւ, և սկսեց վերև բաց-  
ուած առաստաղին նայել. «Ո՛չ, ինչ փոքր տա-  
րածութիւն կայ բանտի և աղատութեան մէջ»։  
Մի առ ժամանակ այդպէս կանգնած մնաց, յե-  
տոյ նկատեց թոկի ձեռով կախուած շորերը, ձեռ-  
քով բռնեց և ամուր քաշեց, բայց շորէ պարանը  
չը կտրուեց. այն ժամանակ կոծիան համոզուե-  
ցաւ, որ աղատութիւն ձեռք բերելը իր ձեռքին  
էր և սկսեց վստահ վերև բարձրանալ։ Կոծիան յիշ-  
եց իր մանկութիւնը, երբ միրգ գողանալու հա-  
մար ծառն էր բարձրանում, և այժմ էլ այնպէս  
սկսեց վերև բարձրանալ, կայծես թէ այդ ամիս-  
ներում նա բանտում չէր եղել։ Կոծիան առաս-  
տաղին հասաւ, գրկեց տախտակը և տանիքը

բարձրացաւ։ Այստեղ նա նստեց, որ մի քիչ շունչ քաշէ։ Փոքր ժամանակ խեղճը այդպէս շուարած մնաց, նա չէր հաւատում թէ ինքը արդէն տանիքի վրա էր գտնում, այլ թւում էր թէ երազումն էր։ Բայց սառն քամին նրան սթափեցրեց։ Նայեց այն կողմը որտեղից քամին էր վիզում և տեսաւ լուսանցքը։ Կոծիան այլևս չը կարողացաւ համբերել, վեր կացաւ ու լուսանցքին մօտեցաւ։ Նա այժմ ուշքի եկաւ և պարզ նկատեց իր դրութիւնը։ «Ել մի ուշանայ» ասում էր նրան մի ներքին ձայն։ Կոծիան վերև նայեց։ Երկինքը ամպամած էր, բայց տեղ—տեղ աստղեր էին երեւում։ 0°հ, ինչպէս ուժգին սկսեց բաբախել նրա սիրտը։ Ներքել բանտ, վերև—երկինք, ներքել —դժոխք, վերև—արքայութիւն։ Այս երկուսից որնես ուզում կոծիա—դժողք թէ արքայութիւն, տանջանք, չարչարանք—թէ ազատ կեանք։ Այստեղ այլևս կոծիան երկար չմտածեց, նա մի ակնթարթում ծածկոյթի վրայ բարձրացաւ և ագահ հաբար սկսեց ազատ շունչ քաշել։ 0°, վաղուց էր, որ նրա թոքերը այս տեսակ մաքուր օդ չէին ներշնչել, վաղուց էր, որ նա իր ամբողջ էութեամբ երջանկութիւն չէր զգացել։ Կոծիան սկսեց բերանաբաց նայել և օդ շնչել։ Նա նայեց գեղի իրանց գիւղը և նրա ազքի առաջ իրանց տունը պատկերացաւ։ Ահա նրա մայրը վաղուայ համար (յաջորդ օրը կիրակի էր) խաճապուրի \* ) էր

\* ) Խաճապուրի. խղից ու պանրից պատրաստուած հաց։ Ծ. Թ.

թխում, եփում էր շփոթը, խաղողի կախան էր պատրաստում, իր սիրելի կոծիային տանելու համար։ Խեղճ մայր, նա չի իմանում, որ իր որդին ուղում է վախչել, և ով գիտէ վաղը որտեղ կըլինի։ «Ել մի ուշանայ», կրկնեց նոյն ձայնը։ Կոծիան էլ մօտեցաւ անձրեկ համար շինած խողովակին և ցած նայեց։ Տեսաւ որ ոչ մի ձայն չի լուսում, վստահ երկու ձեռքով գրկեց խողովակը։ Կոծիան կարծեց թէ ինքը դեռ վերևումն է, երբ գնդակի պէս ներքեւ սլացաւ և գետին տապալուեց։ Խեղճը այնպէս ընկաւ, որ ամբողջ մարմնում ցաւ զգաց և շուարուած կանգնեց։ Կոծիան չէր իմանում թէ ինչ անէր։ Յաւը սթափեցրեց կոծիային և նա պարզ տեսաւ, թէ ինչ դժուար գործ էր ձեռնարկել. «Ո՞ւր պիտի գնամ», մտածում էր նա, «Դիցուք թէ այս գիշեր տուն գնացի, յետոյ... կրկին կը բռնեն։ Որտեղ պիտի թագնուեմ... իսկ եթէ տուն բոլորովին չը գնամ, ուր գնամ արդեօք... խեղճ մայրս մենակ ինչպէս պիտի ապրի... վերջ տամ կեանքիս... բաս ինչ անեմ, յետ գառնամ կրկին, այլևս ուշ է, չեմ կարող... Ա՛խ Աստուած իմ»... Քիչ մնաց որ բարձրածայն արտասանէր վերջին խօսքերը, բայց ինքը իրանից վախեցած՝ անշարժ կանգնած էր շուար դրութեան մէջ։ Բայց յանկարծ ոտնաձայն հասաւ նրա ականջին։ Ակներև էր, որ մօտենում էր պահապանը։ «Ե՞յ կոծիա շուտով գլուխդ ազգատիր», կանչեց մի ներքին ձայն, և նա սկսեց

փախչել։ Պահապանը լսեց նրա փախչելու ձայնը և սկսեց նրան հետեւել։ Կոծիան վազում էր ամբողջ ուժով, բայց ինչ կարող էր օգնել նրան վաղ տալը։ Պահապանը տեսաւ, որ չի կարող յետեկց համել, հրացանը դէպի նա ուղղեց։ «կանդնիր, կանդնիր, ապա թէ ոչ կը սպանեմ» կանչեց։ Բայց Կոծիան ոչինչ չէր լսում. պահապանը ինչ որ քթի տակ մրթմրթաց, և երբ տեսաւ, որ ոչինչ չի դուրս գալիս՝ արձակեց հրացանը։ Հրացանը որոտաց։ Ծուխը աւելի եռամթնացրեց, առանց այն էլ մութ գիշերը, սակայն մթան մէջն էլ նկատելի էր, թէ մէկը ոտները ջարդուած գետին ընկաւ։

## VII

Միւս օրը գեռ ևս աքաղաղները չէին կանչել, երբ Կոծիայի մայրը վեր կացաւ։ Նա ամբողջ գիշերը չէր կարողացել քնել։ Նա մի խուրչին զանազան բաներով լցրեց և ուսի վրա դցած, ձեռն էլ խաղողի մի մեծ կախան բռնած՝ գնաց Կոծիային տեսնելու։ Այդ օրը շատ տխուր էր։ Ուրիշ օրեր միշտ աւելի ուրախ էր լինում, իսկ այսօր, կարծես թէ մի ահագին բար էին դրել նրա սրտի վրայ, նա մորմոքում էր, սակայն ինքն էլ չէր խանում թէ ինչու, Գուցէ դժբախտ մօր սիրու զգում էր...

Նա գուրս եկաւ իրանց գիւղից։ Աքաղաղները նոր էին սկսել կանչել։ Նոցա ձայնը լսում

էր անընդհատ, կարծես մէկ մէկու հետ մրցում էին։ Աքաղաղների այս կանչը աւելի ևս ցաւեցնում էր նրա սիրաը։ Եւ այդ պատճառով շտապում էր, որ շուտով հասնէր մեծ ճանապարհին, իր մտքերով աղատ զբաղուելու համար։

Վերջապէս հասաւ խճուղուն, որը գետի ափով էր գալարւում։ Ջուրը տեսներուն պէս՝ կամեցաւ երեսը լուանալ և այդ պատճառով դէպ՝ այն կողմը գիմեց։ Սառը ջուրը նրա երեսը զուվացրեց և կենդանացրեց, բայց սրտին ոչ մի թեթևութիւն չը պատճառեց։ Նա առաջ էր գընում նոյն վշտացած սրտօվ։

Սնցաւ գիշերը։ Աստղերը հետզհետէ կորչում էին, միայն լուսաստղն էր որ գեռ ուրախ փայլում էր։ Ամպի ոչ մի կտոր չէր երեսում կապոյտ երկնակամարում, և աշնանային գեղեցիկ օրերից մէկն էր լուսանում։

Ահա և լուսաստղն էլ սկսեց նախ փայլիւալ։ Կարծես իր սիրեկանին էր սպասում, իսկ յետոյ բոլորովին գունատուեց։ Արևելքը բոցավառուում էր։ Հորիզոնի վրայ բարձրանում էր արեւը։ Նրա ճանապարհը կարծես ծաղիկներով լինէր զարդարուած։ Ահա և արեւ արձակեց իր առաջին ճառագայթները. որ լուսաւորեց բարձր սարերի կատարները։ Առաջինի հետեւեց երկրորդը, երրորդը... և լոյսը հետզհետէ տարածւում էր երկրիս վրայ։ Ապա արեւը ամբողջապէս դուրս եկաւ, և ամեն ինչ հանդիսաւոր կերպարանը ստացաւ։

Կարծեռ թռչուններն էլ արեին էին սպասում, գանաղան եղանակներով սկսեցին ճվճվալ ու երգել: Նոքա փառաբանեցին նոր բացուած օրը, «ողջոյն» մատուցին հանդարտ դուրս եկող արեւին՝ ընութեան նահապետին: Փչում էր առաւօտուայ զով քամին, ծառերը մեղմ սօսափիւնով շարժում էին իրանց տերեները: Գետը հանդարտ հոսում էր: Արևի ճառագայթները հազար ու մի գոյներով խաղում էին նրա սառնորակ ալիքների մէջ: Ամեն տեղ կենդանութիւն, ամեն տեղ ուրախութիւն էր տիրում, և միայն մեր ճանբորդն էր, որ տիրած սրտով առաջ էր գնում, և որքան աւելի մօտենում էր նպատակին, այնքան աւելի ճմլվում էր նրա սիրտը: Ահա և գիւղաքաղաքը, ահա և բանտը: Բանտը տեսնելուն պէս՝ նրա սիրտը սկսեց տրոփալ: Բանտի դռան մօտ մեծ բազմութիւն էր հաւաքուած և այդքանը քիչ չը զարմացրեց Կոծիայի մօրը: Այսքան բազմութիւն նա երբէք չէր տեսել: Հրացանակիր զինուորներն էլ սովորականից շատ էին և բակը երթալու ոչ ոքի չէին թողնում: Կոծիայի մայրը հազիւ հազ դռանը հասաւ: Առաջ եկաւ մի ոռու զինուոր և չէր թողնում, որ ներս գնար: Կոծիայի մայրը սկսեց աղաչել նրան՝ բայց նա ոչինչ չը հասկացաւ:

Մի փոքր ժամանակից յետոյ՝ Կոծիայի մայրը մի ինչոր կակարդաւոր նկատեց, որ իր կողմն էր գալիս, անմիջապէս մօտեցաւ նրան և աղա-

շեց, որ թոյլ տան, որդուն տեսնելու: Կակարդաւորն ասաց, որ այսօր ոչ մէկի հետ չի կարելի տեսնուել, բայց և այնպէս հարցրեց թէ, ով էր նրա որդին: Երբ Կոծիայի անունը լսեց գունատուեց: Ուրիշներն էլ ինչ որ կասկածաւոր աչքով սկսեցին նայել Կոծիայի մօրը:

—Ինչո՞ւ չի կարելի տեսնել: Այսօր խօմ կիրակի է, իսկ կիրակի օրերը միշտ տեսնելում էի որդուս հետ:

—Այլևս բոլորովին չես տեսնի, —ասաց կակարդաւորը և ժպտաց:

—Ինչպէս թէ բոլորովին չեմ տեսնի: Ի՞նչէք ուզում ինձանից, ինչո՞ւ էք սպանում ինձ, միթէ դուք Աստուած շունիք: Ի՞նչ վլաս է տուել նա ձեզ... Ցոյց տուէք, ցոյց տուէք ի սէր Աստծու, —սկսեց աղերսել գժբախտ մայրը:

Այդ միջոցին երեաց երկրորդ կակարդաւորը, որ ինչպէս երեսում էր ոռու էր: Կոծիայի մայրը սկսեց այժմ էլ սրան աղաչել: Կակարդաւորը ժպտաց, երբ Կոծիայի անունը լսեց և կոտրտաց վրացերէնով մի ինչոր բան ասաց: Կոծիայի մայրը ովնչ չը հասկացաւ և շուարած նայում էր:

—Մայրիկ, չը հասկացա՞ր ինչ ասաց: Քու որդին երէկ գիշեր ուզեցել է փախչել, բայց վրայ են հասել և սպանել, —ասաց առաջին կակարդաւորը:

—Իմ որդուն սպանել են, զարհուրելի ձայ-

Նով ճշաց դժբախտ մայրը և ձեռներով սկսեց եւ-  
րեսն ու գլուխը ծեծել:

—Վայ ինձ որդի, վայ ինձ որդի,—ճշում էր  
նա, մազերը պոկում և երեսը չանգուսում:—Թու-  
ղեք, թողեք, գոռում էր նա և դեպի բանտն էր  
վազում՝ բայց պահապանները ներս չէին թող-  
նում: Սարսափելի տեսք ուներ դժբախտ արա-  
րածը, արիւնը հոսում էր նրա չանգուած այտե-  
րից ու կրծքից. աջքերը ցնորուածի նման այս ու  
այն կողմն էր շարժում, այն ցնորուածի, որովհե-  
տեւ Կոծիայի մայրը խելքը բոլորովին կորցրել էր,  
անսպասելի դժբախտութիւնից և նա հեռու չէր  
խելագարուելուց:



ՎԵՐԱ

ՀՀ Ազգային գրադարան



NL0376575

74.682

ՎՐԱՅԵՐԷՆԻՑ ԹԱՐԴՄԱՆՈՒՄԾ ԳՐԲՈՅՑԿՆԵՐ

- Նինօւիլիկ է. ՀՐԱՄԱՆ (Պատմուածք) . . . . . 5 կ.
  - Խոսկիլված. Թ. ԳԵՐԵԶՄԱՆՈՅԱՆ (Էսկիզ) . . . . . 3 կ.
  - Գուտու Մեգրելի. ԱՆՄԵԴ ԶՈՀ (Պատկեր Ժողովրդի կեանքից) . . . . . 8 կ.

Յանկացողները կարող են դիմել՝ Զաբարիս Գրիգորեանցի  
«Կովկասեան գրավան առանցք»:

